

LIFE – «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով»

ԾՐԱԳՐԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ

#13- մարտ 2015



USAID
ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ



Save the Children

LIFE ծրագիրը (2012-2016) իրականացնում է «Մեյվ դը չիլդրեն» կազմակերպությունը՝ ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ:

Ծրագրի գործընկերներն են «Ակտիվա» միջազգային հիմնադրամը, «Ունիսոն», «Էյջ-Դի-Փի հիմնադրամ» և «Լիարժեք կյանք» ՀԿ-ները:

Ծրագիրը սերտորեն համագործակցում է ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության, Զբաղվածության պետական գործակալության և զբաղվածության կենտրոնների, հաշմանդամություն ունեցող անձանց և ՀԿ-ների, մարզային իշխանությունների և տեղական ինքնակառավարման մարմինների, ծառայություններ մատուցողների, միջին մասնագիտական կրթական հաստատությունների և գործատուների հետ:

ԱՅՍ ՀԱՄԱՐՈՒՄ ԿԱՐԴԱՑԵՔ՝

- **ՆՈՐԱԲԱՅ «ՈՒՆԻՍՈՆ-ՍՏՈՒԴԻԱՅՈՒՄ» ԿԱՇԽԱՏԵՆ ՀԱՇՄԱՆԴԱՍՏՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՅՈՂ ԱՆՁԻՆՔ**
- **ԴԱՍԸՆԹԱՅ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ**
- **ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՐԴԵՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԱՏՉԵԼԻ ԱՎՏՈՒՐՈՒՄՆԵՐ**
- **«LIFE ԾՐԱԳԻՐՆ ՍՏԻՊԵՅ ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՆԱՅԵԼ ԲՈԼՈՐՈՎԻՆ ԱՅԼ ԱԶՔԵՐՈՎ».**
Օլյաննա Հովեյանի պատմությունը



ՆՈՐԱԲԱՑ «ՈՒՆԻՍՈՆ-ՍՏՈՒԴԻԱՅՈՒՄ» ԿԱՇԽԱՏԵՆ ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԻՆՔ

2014թ. ավարտը LIFE ծրագրի համար նշանավորվեց ևս մեկ կարևոր իրադարձությամբ՝ դեկտեմբերի 24-ին կայացավ ծրագրի շրջանակներում հիմնված «Ունիսոն-Ստուդիա» սոցիալական ձեռնարկության բացումը:



Միջոցառմանը ներկա էին Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի փոխնախարար Ջենմա Բաղդասարյանը և այլ պատվավոր հյուրեր:

Ստուդիան տրամադրելու է լուսանկարների և տեսանյութերի թվայնացման ծառայություններ և ապահովելու է 10 աշխատատեղ հաշմանդամություն ունեցող անձանց համար: LIFE ծրագրի շնորհիվ ստուդիայում արդեն աշխատանքի անցած հաշմանդամություն ունեցող անձինք անցել են նաև մասնագիտական վերապատրաստում և մասնակցել անկախ կյանքի հմտությունների և աշխատանքի պատրաստվածության դասընթացին:

Ստուդիան տեղակայված է Երևանի Էրեբունի համայնքում, որն անհատույց տրամադրվել է Երևանի քաղաքապետարանի կողմից:

Դեկտեմբերի 24-ին և դրան հաջորդող ժամանակահատվածում նորաստեղծ ստուդիայի գործունեությունն ու աշխատակիցները մշտապես լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում էին: Նկարահանումներ, հարցազրույցներ, մի խոսքով՝ լայն լուսաբանում: Ստորև ներկայացնում ենք հրապարակումներից մի քանիսի հղումները:

<https://www.facebook.com/video.php?v=536268629809795&set=vb.181255458644449&type=2&theater>

<https://www.facebook.com/video.php?v=561932570576734&set=vb.181255458644449&type=2&theater>

<https://www.facebook.com/video.php?v=536265419810116&set=vb.181255458644449&type=2&theater>

ԴԱՍԸՆԹԱՑ-ՔՆՆԱՐԿՈՒՄ ԳՈՐԾԱՏՈՒՆԵՐԻ ԵՎ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ



Մեծապես կարևորելով ներառական՝ հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ ոչ խտրական միջավայրի ստեղծումը և մարդկային ռեսուրսների կառավարումը՝ յուրաքանչյուր կազմակերպությունում՝ փետրվարի 6-ին LIFE ծրագրի շրջանակներում կազմակերպվել էր դասընթաց-քննարկում Երևան քաղաքի գործատուների մարդկային ռեսուրսների 18 մասնագետների մասնակցությամբ:

Միջոցառման ընթացքում ներկայացվեցին ոլորտի

կարգավորմանն ուղղված տեսական հայեցակարգեր և հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատավայրերում ներառական միջավայրի ստեղծման վերաբերյալ գործնական խորհուրդներ, լավեցին գործատուներին հուզող հարցերը և վեր հանվեցին հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությանը խոչընդոտող հանգամանքները և քննարկվեցին դրանց հաղթահարման ուղիները:

Դասընթացի մասնակիցների շրջանում մեծ հետաքրքրություն առաջացրեց հատկապես «Զբաղվածության մասին» ՀՀ նոր օրենքը՝ քվոտավորման դրույթով, ինչպես նաև Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությանը նպաստող պետական աջակցման ծրագրերը:

Դասընթացի մասնակիցները ստացան LIFE ծրագրի շրջանակներում մշակված «Մարդկային ռեսուրսների կառավարման մասնագետների համար ձեռնարկը» և Հաշմանդամություն ունեցող անձանց զբաղվածությանը վերաբերող այլ նյութեր: Ի դեպ, գործատուներին հաճելիորեն զարմացրեցին իրենց տրամադրված կաշվե պայուսակները, որոնք արտադրվել էին LIFE ծրագրի շրջանակներում Գորիսում հիմնադրված «ԼԱՅՖ» կաշվե իրերի արտադրամասում:



ԵՐԵՎԱՆՈՒՄ ԱՐԴԵՆ ԳՈՐԾՈՒՄ ԵՆ ՄԱՏՉԵԼԻ ԱՎՏՈՒՄՆԵՐ



2015թ. փետրվարին գրեթե բոլոր հայկական լրատվամիջոցներն անդրադարձան այն թեմային, որ Երևանում շահագործման են հանձնվել սայլակ օգտագործող հաշմանդամների համար մատչելի 10 ավտոբուսներ: Այս լուրը լուսաբանեց նաև Անկախ կյանքի եվրոպական ցանցը (European Network of Independent Living – ENIL) «Մատչելիությունը և անկախ կյանքը գալիս են Հայաստան» հոդվածում (<http://www.enil.eu/news/accessibility-and-independent-living-come-to-armenia/>):

Իսկապես, երկար սպասված իրադարձություն էր: Վերջապես առաջին քայլն արվեց, և այն կարելի է համարձակորեն անվանել Երևանի քաղաքապետարանի և հասարակական կազմակերպությունների մասնակցային աշխատանքի արդյունք: Թերևս բոլորը քաջ գիտակցում էին այդ խնդրի կարևորությունը, սակայն խնդրի լուծման համար իրական խթան հանդիսացավ 2013թ. Երևանի քաղաքապետարանում անցկացված հաշմանդամների հարցերով զբաղվող հանձնաժողովի նիստը, որի ժամանակ այս թեմային անդրադարձավ LIFE ծրագրի գործընկեր «Ունիսոն» ՀԿ գործադիր տնօրեն Արմեն Ալավերդյանը: Ի պատասխան հնչած բազմաթիվ «բայցերի» և առկա տրանսպորտային միջոցների հարմարեցման «անհնարինության» մասին կարծիքների, Ալավերդյանը ներկայացրեց քաղաքային տարբեր տեսակի ավտոբուսների մատչելի դարձնելու բազմաթիվ օրինակներ: Այս և մի շարք այլ միջոցառումների արդյունքում, 2015թ. մայրաքաղաքի բյուջեում գումար նախատեսվեց 10 ավտոբուսների հարմարեցման համար, իսկ «Ունիսոնի» հետ համագործակցության շնորհիվ ընտրվեց հարմարեցման ամենաօպտիմալ տարբերակը:

Հունվարի 22-ին տեղի ունեցավ առաջին մատչելի ավտոբուսի փորձարկումը, իսկ արդեն փետրվարի 20-ին կայացավ մատչելի երթուղիների բացման պաշտոնական արարողությունը: Քանակը, անշուշտ դեռ բավարար չէ, սակայն Երևանի քաղաքապետարանը նախատեսում է յուրաքանչյուր տարի այս թիվը համալրել ևս 10-ով:

Իսկ մինչ այդ, մատչելի ավտոբուսները երթնեկում են թիվ 13, 20, 22, 28 և 35 երթուղիներով: Տեղեկանալու համար, թե մատչելի ավտոբուսը երբ կմոտենա տվյալ կանգառ, կարելի է գանգահարել դիսպետչերին 010-67-44-28 հեռախոսահամարով:

Նյութը տրամադրվել է Ունիսոն ՀԿ-ի կողմից, հեղինակ՝ Մարիաննա Չալիկյան

«LIFE ԾՐԱԳԻՐՆ ՍՏԻՊԵՑ ՄԵՐ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ ՆԱՅԵԼ ԲՈԼՈՐՈՎԻՆ ԱՅԼ ԱԶՔԵՐՈՎ»

Մրանք Գավառի Զբաղվածության կենտրոնի աշխատակից Օվսաննա Հովեյանի խոսքերն են: Այս կնոջ մեջ ամփոփված են պատրաստակամությունն ու նորը սովորելու ձգտումը: Զբաղվածության կենտրոնում նա աշխատում է 1997-ից: **«Նախկինում հաշմանդամություն ունեցող անձանց հետ քիչ էինք աշխատում, հավանաբար նրանց մասին քիչ ինֆորմացիա ունեինք, նրանց կարողություններին ծանոթ չէինք, հիմա բավական հմտացել ենք»**, - կենտրոնում հաշվառված հաշմանդամություն ունեցողների Անհատական զարգացման պլանները խնամքով դասավորելով՝ ասում է Օվսաննան: Հմտանալ նրան օգնել են հասկապես LIFE ծրագրի շրջանակներում կազմակերպված դասընթացները՝ MAST թեստավորման և դիտարկման սկզբունքների վերաբերյալ:

«MAST թեստն արմատապես նոր մոտեցում բերեց հաշմանդամություն ունեցողների հետ աշխատանքում: Նախկինում սահմանափակվում էինք միայն հաշվառելով և, կարծես, մոռանում նրանց մասին: Այժմ այդ աշխատանքներն այլ բովանդակություն են ստացել: Ընտրելով թեստավորման այս համակարգի կարողանում ենք թե՛ հաշմանդամություն ունեցողի և թե՛ մեզ համար պարզել ինչպիսի՞ աշխատանք կարող է կատարել մարդը, ինչպիսի՞ կադր կարող ենք առաջարկել գործատուին»:

Իր աշխատավայրում՝ զբաղվածության կենտրոնում, Օվսաննան նաև MAST թեստավորման պատասխանատուն է: Ծրագրի շրջանակներում նա արդեն թեստավորել է հաշմանդամություն ունեցող շուրջ վեց տասնյակ անձանց: Իր նախկին ու ներկա աշխատատեղում Օվսաննան էական փոփոխություններ է նկատում: Հաշմանդամություն ունեցող անձանց հետ շփման նրբություններին տիրապետելով՝ այժմ փորձում է նրանց ավելի ակտիվորեն ներգրավել զբաղվածության պետական ծրագրերում: Արդյունավետ է դարձել նաև համագործակցությունը գործատուների հետ: Գիտելիքի աճի հետ մեկտեղ՝ LIFE ծրագիրը հնարավորություն է տվել մասնագիտանալու նաև աշխատանք փնտրող հաշմանդամություն ունեցող անձանց նկատմամբ անհատական մոտեցում ցուցաբերելու հարցում:



«Անհատական զարգացման պլանների միջոցով մեր աշխատանքն այս խմբի հետ այժմ ավելի տեսանելի է և կանոնակարգված», - ասում է Օվսաննան: Ամենօրյա աշխատանքային ծանրաբեռնվածությունից չի դժգոհում: Փորձում է օգտակար լինել կենտրոն այցելած յուրաքանչյուր քաղաքացու: Օվսաննային հրաժեշտ ենք տալիս արդեն MAST թեստավորման սենյակում: Այստեղ նրան է սպասում հերթական թեստավորվողը, ով մեզ հիշում է դարձյալ LIFE ծրագրի շրջանակներում անցկացված «Կյանքի հմտություններ և աշխատանքի պատրաստվածություն» դասընթացից:

LIFE ծրագրի մեկնարկից՝ 2012թ. հունվարից մինչ օրս

417

հաշմանդամություն ունեցող անձ
տեղավորվել է աշխատանքի

Ի գիտություն հետազոտողների, հասարակական և մասնավոր սեկտորի.

ՏԵՂԵԿԱԳԻՐԸ հնարավորություն է տալիս լուսաբանել հաշմանդամության ունեցող անձանց ուղղված ծրագրերը/հետազոտությունները: Հետաքրքրվածության դեպքում կարող եք դիմել LIFE ծրագրին Armenia@savethechildren.org էլ. հասցեով:

LIFE ՏԵՂԵԿԱԳԻՐԸ պատրաստվում է ԱՄՆ ՄԶԳ Ֆինանսավորմամբ իրականացվող LIFE ծրագրի շրջանակներում: Տեղեկագրում արտահայտված տեսակետները հեղինակներին են և կարող են չարտացոլել ԱՄՆ ՄԶԳ-ի կամ «Մեյվ դը չիլդրենի» տեսակետները:



Save the Children

«Մեյվ դը չիլդրենը» երեխաների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող ամենամեծ կազմակերպություններից է աշխարհում: Այն ներառում է 29 ազգային կազմակերպություններ, որոնք գործում են ավելի քան 120 երկրներում:

«Մեյվ դը չիլդրեն»-ի հայաստանյան ներկայացուցչություն
Հայաստան, Երևան 0014, Ազատության պող. 27, 3-րդ հարկ
Հեռ.՝ (374-10) 20-10-14, 20-10-25, 20-10-29; Ֆաքս՝ (374-10) 20-12-29
Էլ. փոստ՝ Armenia@savethechildren.org
Վեբ կայք՝ <https://armenia.savethechildren.net/>,
www.life-disability.am



facebook



youtube